Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2025թ.
հուլիսի 12-ի թիվ 15 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«12» հուլիս 2025թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Կ Ա Ր Գ

(փոփոխություններով)

I. Ընդհանուր դրույթներ

1. Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ նաև համալսարան, ԳՊՀ) բակալավրի ու մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Գավառի պետական համալսարանում առկա ու հեռակա ուսուցման ձևերով բակալավրի և առկա ուսուցման ձևով մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման կանոնները:
2. Կարգը ներառում է կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգը, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման կազմակերպման կարգը:
3. Կարգում սահմանված են նաև կրեդիտային համակարգի հիմնական հասկացությունները, բնութագրիչները և ընթացակարգերը:

II. Կրեդիտային համակարգի ընդհանուր սկզբունքները

4. Կրեդիտային համակարգի հիմնական հասկացությունները.
1) Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական կրեդիտային համակարգին (ECTS) բնորոշ ներքոհիշյալ հասկացություններն ընդունված են Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում և գործում են ԳՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում:

2) Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը որոշվում է համապատասխան չափանիշներով, որը հնարավորություն է տալիս գնահատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքների ձեռքբերման մակարդակը: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

3) Կրթական (ուսումնական) մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդհանուր միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

5. ECTS կրեդիտի հատկանիշներն են.

1) ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապունքներին, լաբորատոր աշխատանքներին, կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզի կատարումը, ստուգարքներին ու քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելը և այլն,

2) կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),

3) կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ամբողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,

4) ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

5) կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),

6) կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

6. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

7. Կրեդիտների կուտակման և փոխանցման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում առկա ուսուցման համակարգում գնահատվում է 60 ECTS կրեդիտ, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 48: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

8. ECTS համակարգի հատկանիշներն են.

1) կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

2) կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին, մագիստրոսական թեզին, ամփոփիչ ատեստավորմանը և այլն,

3) կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են ուսանողներին ու դասախոսներին:

9. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթներն են.

1) կրեդիտների կուտակում.

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակում, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ,

2) փոխանցում.

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև:

3) Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և իրականացվում համապատասխան ընթացակարգով:

10. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

1) գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, 15 մագիստրոսական թեզ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են

ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն հետազոտական աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,

2) կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագրի փոխանցման (տեղափոխման) հնարավորություն համալսարանի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

III. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

1. ԳՊՀ առկա ուսուցման բակալավրիատում ուսումնական տարին բաղկացած է երկու կիսամյակից՝ ընդհանուր 40 շաբաթ տևողությամբ:

2. Կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որից 15 շաբաթը հատկացվում է ուսումնական պարապմունքներին, 1 շաբաթը՝ միջանկյալ առաջին քննությանը, 1 շաբաթը՝ երկրորդ միջանկյալ քննությանը և ստուգարքներին, իսկ 3 շաբաթը նախատեսված է գիտելիքների ամփոփիչ ստուգման և վերջնական գնահատականի ձևավորման համար:

3. Յուրաքանչյուր կիսամյակի 9-րդ ու 17-րդ շաբաթների ընթացքում (երկու միջանկյալ քննաշրջաններում) տեղի է ունենում գիտելիքների ստուգում: Կիսամյակի վերջում, նախքան ամփոփիչ քննության կամ ստուգարքի անցկացումը, կատարվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի, գործնական, սեմինար ու լաբորատոր աշխատանքներին մասնակցության ակտիվության գնահատում: Առանձին դեպքերում դասընթացի սահմանված ժամաքանակն ավարտելու պարագայում կարող է ռեկտորի թույլտվությամբ դասընթացից միջանկյալ քննությունները, ամփոփիչ քննությունը կամ ստուգարքն անցկացվել վերոնշված ժամկետներից շուտ՝ հաստատված և նախապես հրապարակված ժամանակացույցով:

4. Յուրաքանչյուր առարկայի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ հետևյալ գործոնների և դրանց կշիռների հիման վրա. հաճախումներ, երկու միջանկյալ և մեկ ամփոփիչ քննություններ (կամ ստուգարքներ), սեմինար, գործնական, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքներին ուսանողի ցուցաբերած ակտիվությունը:

Գործոնները գնահատվում են 100 միավորանոց համակարգով:

5. Համապատասխան կշիռների շրջանակներում հինգ գործոնների գնահատականների գումարով հաշվարկվում է ուսանողի վերջնական գնահատականը: Պրակտիկայի գնահատումը կատարվում է պրակտիկայի ավարտից հետո:

Բազմագործոն գնահատման բաղադրիչները

Հաճախումներ

6. Հաճախումները գնահատականի ձևավորման պարտադիր գործոններից են: Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք

ունեն միայն այն ուսանողները, որոնց հաճախումների տոկոսը բարձր է 40-ից, բացառությամբ առանձին դեպքերի, երբ հիմնավորվում են հարգելի բացակայությունները:

7. Յուրաքանչյուր ամփոփիչ քննությունից և/կամ ստուգարքից առաջ, դեկանատի կողմից, քննական ձևաթերթում, մատյանների տվյալների կամ դասախոսների կողմից վարած ուսանողների հաճախումների ներկայաթերթիկների և ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնի համապատասխան ցուցակների հիման վրա, կատարվում է ուսանողի բացակայության ընդհանուր ժամաքանակի գրանցում:

Քննություններ և ստուգարքներ

8. Ուսանողների գիտելիքների ստուգումները կատարվում են քննությունների և ստուգարքների միջոցով՝ ըստ սահմանված ժամանակացույցի կազմակերպելով քննություններ՝ կիսամյակի ընթացքում երեք անգամ (երկու միջանկյալ և մեկ ամփոփիչ), և ստուգարքներ՝ կիսամյակի ընթացքում մեկ անգամ:

9. Քննությունները և ստուգարքները կարող են անցկացվել գրավոր կամ բանավոր՝ համաձայն առարկայի բնույթի և առանձնահատկությունների՝ ելնելով ուսումնական պլանից:

10. Քննություններն անցկացվում են կիսամյակի 9-րդ, ինչպես նաև 17-րդ շաբաթների ընթացքում (երկու միջանկյալ քննաշրջաններում) և կիսամյակի վերջին երեք շաբաթվա ընթացքում (ամփոփիչ քննաշրջանում)՝ դեկանատի կողմից նշանակված օրերին, կամ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով:

11. Քննության կամ ստուգարքի արդյունքները գրանցվում են քննական տեղեկագրում:

12. Ամփոփիչ քննության կամ ստուգարքի ժամանակ դասախոսը ստուգում է ամբողջ կիսամյակի նյութի իմացությունը:

13. Ամփոփիչ քննությանը կամ ստուգարքին ուսանողի մասնակցությունը պարտադիր է՝ անկախ մինչ այդ նրա հավաքած միավորների քանակից:

14. Վերջնական քննության ժամանակ 12 միավորից (հնարավոր 30 միավորից) կամ ստուգարքի ժամանակ 20 միավորից (հնարավոր 50 միավորից) քիչ հավաքած ուսանողը ստանում է D կամ U գնահատական (‹‹անբավարար›› կամ ‹‹չստուգված››):

15. Ընթացիկ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին թույլատրվում է մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնել առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ սահմանված կարգով և ժամկետներում ևս երկու անգամ վերահանձնելով համապատասխան առարկայական դասընթացները, որոնց ցանկը հաստատվում է՝ հաշվի առնելով առարկաների շարունակականության սկզբունքը, ըստ ուսումնական պլանի:

Ակտիվությունը սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքների ժամանակ

16. Ակտիվությունը և ինքնուրույն հետազոտական աշխատանքը գնահատվում է դասախոսի կողմից կիսամյակի վերջում (մեկ անգամ)՝ համաձայն կիսամյակի ընթացքում վարվող սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքներին,

ինքնուրույն աշխատանքներին ուսանողի մասնակցության և կատարած աշխատանքի արդյունքների:

17. Ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման համար հիմք է ընդունվում ներքոհիշյալ աղյուսակում տրված 100 միավորանոց գնահատման համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աղյուսակ 1.

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A +	4,0	95-100
	A	4,0	87-94
	A -	3,7	81-86
Լավ	B+	3,3	75-80
	B	3,0	67-74
	B-	2,7	61-66
Բավարար	C+	2,3	55-60
	C	2,0	46-54
	C-	1,7	40-45
Անբավարար	D	-	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Կտրված	U	-	< 40

18. Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական տեղեկագրերում արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

19. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», «անբավարար», «չներկայացած» կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

20. Գիտելիքների գնահատման բազմագործոն համակարգի միավորներն՝ ըստ գործոնների և մոդուլների տեսակների.

ա/ Քննությամբ ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 2.

հ/հ	Գործոններ	Առավելագույն միավորը
1.	Հաճախումներ	10
2.	1-ին միջանկյալ քննություն	20
3.	2-րդ միջանկյալ քննություն	20
4.	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	20
5.	Վերջնական հանրագումարային քննություն	12-30
	Ընդամենը	**100**

բ/ Ստուգարքով ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 3.

հ/հ	Գործոններ	Առավելագույն միավորը
1.	Հաճախումներ	10
2.	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	40
3.	Վերջնական հանրագումարային ստուգում	20-50
	Ընդամենը	**100**

գ/ Կուրսային աշխատանք

Աղյուսակ 4.

հ/հ	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորներ
1.	Բովանդակության ամբողջականությունը (լիարժեքությունը)	30
2.	Կատարման ինքնուրույնությունը	25
3.	Համապատասխանությունը տեխնիկական պահանջներին	15
4.	Ներկայացման և պաշտպանության որակը	12-30
	Ընդամենը	**100**

դ/ Ուսումնամանկավարժական պրակտիկա /քննություն/

Աղյուսակ 5.

հ/հ	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչը	Միավորը	Ցուցում՝ գնահատման մասին
1	Հաճախում	20	Գնահատման ժամանակ 20 միավորից հանվում է յուրաքանչյուր բացակայած օրվան համապատասխան միավորների թիվը, արդյունքը կլորացնելով՝ պակասորդով
2	Փորձնական կամ բաց դասեր	20	Գնահատումը իրականացվում է արձանագրություններին համապատասխան
3	Արտադասարանական միջոցառումներ	20	
4	Հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններ և բնութագրերի կազմում	20	
5	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և ներկայացում	20	Գնահատումը իրականացվում է՝ կանոնակարգի և սույն աղյուսակի համաձայն

ե/ Ուսումնական պրակտիկա /սպուգարք/

Աղյուսակ 6.

հ/հ	Գործոններ	Միավոր
1	Հաճախումներ	30
2	Աշխատանքային պլանի կատարում	30
3	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և պաշտպանություն	16-40

զ/ Արտադրական պրակտիկա

Աղյուսակ 7.

հ/հ	Գործոններ	Միավոր
1	Հաճախումներ	30
2	Աշխատանքային պլանի կատարում	40
3	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և պաշտպանություն	12-30

է/ Նախաավարտական, գիտահետազոտական, գիտամանկավարժական պրակտիկա /քննություն, սրուգարք/

Աղյուսակ 8.

հ/հ	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչը	Միավորը	Ցուցում՝ գնահատման մասին
1	Հաճախում	30	Գնահատման ժամանակ 30 միավորից հանվում է յուրաքանչյուր բացակայած օրվան համապատասխան միավորների թիվը, արդյունքը կլորացնելով՝ պակասորդով
2	Աշխատանքային պլանի կատարում	40	Գնահատումը իրականացվում է՝ կանոնակարգի և սույն աղյուսակի համաձայն
3	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և պաշտպանություն	12-30	

ը/ Ավարտական աշխատանք

Աղյուսակ 9. 1

հ/հ	Գործոններ	Միավոր
1	Աշխատանքի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Աշխատանքի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները և առաջարկությունները	40
3	Աշխատանքին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10
4	Ավարտական աշխատանքի ներկայացումը, պաշտպանությունը	16-40

թ/ Մագիստրոսական թեզ

Աղյուսակ 9. 2

հ/հ	Գործոններ	Միավոր
1	Թեզի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Թեզի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները և արված եզրակացությունները և առաջարկությունները	40
3	Մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10

4	Թեզի ներկայացումը, պաշտպանությունը	16-40

Ուսանողների իրազեկությունների ստուգման ձևերը

21. Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում, օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը, կիրառվում են ուսանողների իրազեկությունների ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

1) ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգում,

2) միջանկյալ ստուգում,

3) հանրագումարային ստուգում:

Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգում

23. Կանոնակարգի համաձայն՝ ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային ստուգողական աշխատանքները, իսկ ինքնուրույն աշխատանքը կարող է ստուգվել շնորհանդեսների, զեկուցումների, հետազոտությունների արդյունքների, թեստերի, կատարված հանձնարարությունների, լուծված առաջադրանքների, ինքնուրույն աշխատանքի արդյունքների ստուգման և գնահատման այլ ձևերի միջոցով:

24. Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման ու գնահատման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը, ինչպես նաև դասընթացի բնույթն ու առանձնահատկությունները:

25. Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը, ինքնուրույն աշխատանքի արդյունքները և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի մեթոդները կատարելագործելու, պարապմունքների և ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

26. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումներն ու ինքնուրույն աշխատանքի գնահատումներն իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքները:

27. Անկախ ընթացիկ ստուգման և ինքնուրույն աշխատանքի տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի գնահատում:

28. Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման համար տրված բոլոր

աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ դրանց համամասնությունից:

29. Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման գնահատականը հաշվարկվում է սույն կարգի աղյուսակ 2-ում և 3-ում «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն աշխատանք» գործոնին հատկացված միավորի (քննության դեպքում՝ 20 միավորի, ստուգարքի դեպքում՝ 40 միավորի) շրջանակներում բոլոր ձևերի ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգումների արդյունքներից:

Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի: Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման ձևերն ընտրում է դասախոսը՝ ելնելով դասընթացի բնույթից ու առանձնահատկություններից:

‹‹Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն աշխատանք» գործոնի գնահատականի հաշվարկը կարող է կատարվել Օրինակ 1-ում (ստուգարքով ավարտվող մոդուլի դեպքում) և Օրինակ 2-ում (քննությամբ ավարտվող մոդուլի դեպքում) ներկայացված ձևով (հաշվարկում 5-րդ սյան միավորները ստացվում են 3-րդ և 4-րդ սյուների միավորների բազմապատկման արդյունքում).

1) ստուգարքով ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 1.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման ձևերը	Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5սյունակի միավորը. = 3սյ. * 4սյ. /
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			

5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				**25,2=26**

2) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման գնահատական մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5այունակի միավորը.= 3այ.*4այ./
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				**12,8=13**

Այսպիսով, ՎԳընթ=Կx*Գx., որտեղ

ՎԳընթ-ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն աշխատանքի վերջնական գնահատականն է,

Կx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,
Գx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:
Ընթացիկ ստուգման և ինքնուրույն աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2=1/, /0,4+0,6=1/:
Ընթացիկ ստուգման և ինքնուրույն աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը: Ընթացիկ ստուգման և ինքնուրույն աշխատանքի համար դասախոսը կարող է հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

30. Միջանկյալ ստուգում

Միջանկյալ ստուգումն անցկացվում է կիսամյակի ընթացքում ուսանողի առաջադիմությունը գնահատելու և ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ժամանակ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:
31. Միջանկյալ ստուգումն արտահայտում է ուսանողի կողմից ուսումնական պլանում առկա դասընթացի առարկայական ծրագրում ընդգրկված թեմաների որոշ մասի յուրացման աստիճանը և ավարտվում է այդ հատվածի (թեմաների) գնահատականներով:
32. Միջանկյալ ստուգումն անցկացվում է ստուգողական աշխատանքի, համակարգչային թեստավորման կամ այլ եղանակներով: Միջանկյալ ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում միջանկյալ քննությանը հատկացված 20 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:
33. Միջանկյալ ստուգման եղանակը և գնահատման սկզբունքները պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի բնույթը և առանձնահատկությունները: Դրանց մասին պետք է տեղեկացվեն ուսանողները դասընթացի սկզբում:

Հանրագումարային ստուգում

34. Հանրագումարային ստուգման ձևերն են քննությունները և հանրագումարային ստուգարքները (այն մոդուլներից, որոնցից քննություն նախատեսված չէ):
35. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:
36. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ աղյուսակ 2-ում և 3-ում վերջնական քննությանը հատկացված 30 միավորի կամ վերջնական ստուգմանը հատկացված 50 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:
37. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում

դասախոսներին ու ուսանողներին անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

38. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից:

39. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

40. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերաբերյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

41. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած» գնահատականներ, համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

42. Լուծարք

Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության և (կամ) ստուգարքի համար:

43. Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում (կամ «U»-ի՝ ստուգարքի պարագայում), ուսանողը հարգելի պատճառով չի ներկայացել քննությանը և տեղեկագրում ամրագրվել է F, կամ գումարային ամփոփիչ գնահատականը պակաս է 40–ից:

44. Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

45. Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել երկու անգամ՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգին համապատասխան՝ ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ առանձին դեպքերում կարող է հանձնել անհատական ժամանակացույցով:

Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

46. Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝

այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, որի արժեքը պակաս է 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

47. Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

48. Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

49. Գնահատման տեսանկյունից չեն առանձնացվում հարգելի և ոչ հարգելի պատճառներով բացակայության դեպքերը: Հաճախումները ամփոփվում են կիսամյակի վերջում:

50. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն դեկանատում գրանցված՝ սահմանված կարգի բժշկական տեղեկանքի, դիմումի, հիմնավորող այլ փաստաթղթերի առկայության դեպքում:

51. Միջանկյալ քննությանը հարգելի բացակայած (համապատասխան փաստաթղթով հիմնավորված) ուսանողների քննությունները և ստուգարքները հաջորդ շաբաթ անցկացվում են լսարանային ժամերից դուրս՝ դեկանատի կողմից նախօրոք սահմանված ժամանակացույցի համաձայն:

52. Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ լուծարային շրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

53. Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է հանձնել այն:

54. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված՝ ուսման ընդհատման հանգամանքից՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

55. ՀՀ և արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններից ԳՊՀ տեղափոխված, ԳՊՀ-ում ուսանողական իրավունքները վերականգնած և կրթությունը շարունակող, ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցած, երկրորդ բարձրագույն, ինչպես նաև շարունակական կրթություն ստացող ուսանողների՝ տարբեր գնահատման համակարգերում ստացած քննական գնահատականները ԳՊՀ-ում համապատասխանաբար հավասարեցվում են սույն կարգի Աղյուսակ 1-ում նշված «Գերազանց», «Լավ», «Բավարար», գնահատականների միջին՝ «A», «B», «C», իսկ «Անբավարար» գնահատականը՝ «D» տառային նշանակումներին, համապատասխան «4,0», «3,0», «2,0» թվանշաններով և 100 միավորանոց համակարգում նախատեսված միավորներով:

Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

56. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով ու պաշտպանությամբ:

57. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է նախաավարտական ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

58. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա/ աշխատանքի ներկայացումը մասնագիտական ամբիոնի քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ/ ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտական ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ/ մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու գործընթացի կազմակերպում;

դ/ ավարտական աշխատանքի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

59. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորները՝ ըստ Աղյուսակ 9-ի:

Ծրագրի ավարտական պահանջները

60. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

61. Մինչև ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ: Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 39 կրեդիտ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 36 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 9 կրեդիտ՝ ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 6 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից) և առնվազն 18 կրեդիտ՝ պրակտիկայից և ամփոփիչ ատեստավորման ձևերից:

Ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում:

61"Մնացած 184 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական

արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և առանձին հաստատվում է յուրաքանչյուր մասնագիտության համար:

62. Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է և համապատասխան որակավորումներով դիպլոմները (սովորական, գերազանցության) շնորհվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

63. Ընթացիկ և եզրափակիչ ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցերը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

64. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում և հաստատվում ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է Ակադեմիական քաղաքականության բաժին:

Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

65. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում արձանագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր (հավելված 1), որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

66. Ուսանողի վաստակած կրեդիտները գրանցվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում ուսանողի ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

67. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

1) գումարային կրեդիտների քանակը,
2) գնահատված կրեդիտների քանակը,
3) վարկանիշային միավորները,
4) միջին որակական գնահատականը:

68. Գումարային կրեդիտը (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

69. Գնահատված կրեդիտը (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը ձևավորվել է տարբերակված գնահատականներով.

$$\text{ԳԿ} = \sum \text{Կրեդիտ:}$$

70. Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ Գ.արդ.}$$

որտեղ Գ.արդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

71. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}}$$

72. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

Ուսման առաջադիմությունը

73. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա:

74. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝

ա/ կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),

բ/ հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները,

գ/ ապահովել է բակալավրի կրթական աստիճանում ուսանողի համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի 1,7 նվազագույն շեմը:

75. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում գտնվող, եթե չի բավարարել նախորդ կետում նշված 3 պայմաններից որևէ մեկը:

76. Ընթացիկ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին թույլատրվում է մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնել առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ ԳՊՀ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում ևս երկու անգամ վերահանձնելով համապատասխան առարկայական դասընթացները, որոնց ցանկը հաստատում է Համալսարանը՝ հաշվի առնելով առարկաների շարունակականության սկզբունքը, ըստ ուսումնական պլանի:

77. Միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց վարկանիշային միավորների օգնությամբ և չափվում միջին որակական գնահատականներով:

Ուսումնական խորհրդատուների ծառայությունը.

78. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերի քաջատեղյակ մասնագետներ:

79. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ինքնուրույն աշխատանքը և ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

80. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

81. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

IV. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

1. Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական աստիճանում ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը.

1) ԳՊՀ հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական աստիճանում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է միջինը 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի:

2) ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

3) Հեռակա ուսուցման կրթական ծրագրերի նորմատիվային կիսամյակային բեռնվածությունը կազմում է 24 կրեդիտ՝ անկախ հայցվող որակավորման աստիճանից:

4) Հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողի կիսամյակային փաստացի ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 24 կրեդիտ:

5) Հեռակա ուսուցման կրթական ծրագրերով նախատեսված լսարանային պարապմունքների տարեկան նորմատիվային ժամաքանակն առնվազն 160 ժամ է:

6) Հեռակա ուսուցման ձևում կիսամյակի տևողությունը 16 շաբաթ է, որից 12-ը հատկացվում է ուսումնական պարապմունքներին և ինքնուրույն աշխատանքին, իսկ 4 շաբաթը՝ քննաշրջանին: Լսարանային պարապմունքների գումարային տևողությունը ուսումնական տարում կազմում է առնվազն 6 շաբաթ:

7) Ինքնուրույն հետազոտական աշխատանքների, ռեֆերատների, կուրսային աշխատանքների և նախագծերի, գրավոր առաջադրանքների ստուգման ու գնահատման ընթացակարգերը սահմանում է համալսարանը՝ ելնելով մասնագիտական և հայցվող որակավորման առանձնահատկություններից:

8) Ստուգարքներին և եզրափակիչ քննություններին մասնակցելու թույլտվություն են ստանում այն ուսանողները, ովքեր հանձնել են ուսումնական պլանով տվյալ դասընթացի համար նախատեսված ինքնուրույն աշխատանքի բոլոր բաղկացուցիչները:

9) Հեռակա ուսուցման ուսանողի հեռացումը կամ վերականգնումն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի:

10) Հեռակա ուսուցման ուսանողի շարժունությունն իրականացվում է համաձայն «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի:

2. Ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը.

Հեռակա ուսուցման ուսանողների ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը ներառում է.

1) ուսումնական պլանով նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերը,

2) ուսումնական ձեռնարկներ և հեռակա ուսուցման ուսանողների համար նախատեսված դասախոսությունների տեքստեր,

3) կուրսային աշխատանքների կատարման և հանձնման մեթոդական ցուցումներ,

4) գրավոր աշխատանքների թեմաներ, ինքնուրույն աշխատանքի առաջադրանքներ, թեստեր,

5) ամփոփիչ քննությունների և ստուգարքների հարցաշարեր,

6) տեսալսողական և էլեկտրոնային ուսումնամեթոդական նյութեր, օգտակար գրականության ցանկ և այլն:

3. Յուրաքանչյուր կիսամյակից հետո համալսարանը պարտավոր է բոլոր ուսանողներին ապահովելու հաջորդ կիսամյակի համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերի ամբողջական փաթեթով:

4. Ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը.

1) Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է, և համապատասխան որակավորումներով դիպլոմները (սովորական, գերազանցության) շնորհվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

2) Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված է գնահատման միավորների սանդղակը՝ ըստ Աղյուսակ 9-ի:

5. Հեռակա ուսուցման ձևով կրեդիտային համակարգում յուրաքանչյուր դասընթացի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ հետևյալ գործոնների և դրանց կշիռների հիման վրա. հաճախումներ, ընթացիկ ակտիվություն, մեկ միջանկյալ և մեկ ամփոփիչ քննություններ (կամ ստուգարք), սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքներին ակտիվություն, ինքնուրույն աշխատանք: Գործոնները գնահատվում են 100 միավորանոց համակարգով, առկա ուսուցման գնահատման չափանիշներին համապատասխան՝ աղյուսակ 1-ում տրված միավորների համաձայն:

6. Ուսանողների գիտելիքների ստուգումները կատարվում են քննությունների և ստուգարքների միջոցով՝ ըստ սահմանված ժամանակացույցի կամ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով, քննությունները՝ կիսամյակի ընթացքում երկու անգամ (մեկ միջանկյալ և մեկ ամփոփիչ), իսկ ստուգարքները՝ կիսամյակի ընթացքում մեկ անգամ: Քննաշրջանից հետո ստուգարքներ և /կամ/ քննություններ կազմակերպվում են լուծարային շրջաններում, ինչպես նաև առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով:

7. Հեռակա ուսուցմամբ ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոն համակարգի միավորներն՝ ըստ գործոնների և մոդուլների տեսակների.

1) Քննությամբ ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 11.

h/h	Գործոններ	Միավորներ
1.	Հաճախումներ	20
2.	Միջանկյալ քննություն	20
3.	Ընթացիկ ակտիվություն և ինքնուրույն հետազոտական աշխատանք	25
4.	Վերջնական հանրագումարային քննություն	35
	Ընդամենը	100

2) *Սրուգարքով ավարտվող մոդուլների համար* *Աղյուսակ 12.*

h/h	Գործոններ	Միավորներ
1	Հաճախումներ	20
2	Ընթացիկ ակտիվություն և ինքնուրույն հետազոտական աշխատանք	35
3	Վերջնական հանրագումարային ստուգում	45
	Ընդամենը	100

8. Կուրսային աշխատանքների, մանկավարժական, ուսումնական, նախաավարտական պրակտիկաների, ավարտական աշխատանքների գնահատման միավորների բաշխումը համապատասխանում է առկա ուսուցման համակարգում սահմանված չափանիշներին:

9. Միջանկյալ քննության, հանրագումարային քննության անցկացման ձևերը համապատասխանում են առկա ուսուցման համապատասխան գործոնի գնահատման ձևերին:

10. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 20-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա: Առանձին դեպքերում՝ հարգելի պատճառներով հեռակա ուսուցման դասերից բացակայած ուսանողը կարող է մասնակցել առկա ուսուցման ֆակուլտետում համապատասխան առարկայի դասերին և ստանալ միավորներ՝ ‹‹Հաճախումներ›› գործոնից:

11. Հեռակա ուսուցման ձևում լուծարքի, դասընթացի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու, դասընթացի վերահանձնման պայմանները, ինչպես նաև ծրագրի ավարտական պահանջները համապատասխանում են առկա ուսուցման պայմաններին և պահանջներին:

Y. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

ԳՊՀ առկա ուսուցմամբ մագիստրոսական կրթական աստիճանում ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական փաստաթղթերը.

1. Ծրագրերում գրանցվելուց և հրամանագրվելուց հետո ստեղծվում է մագիստրոսի անհատական ակադեմիական տեղեկագիր, որտեղ կատարվում են մագիստրոսական

ծրագրերի ուսումնական և հետազոտական հատվածների իրականացման ժամանակացույցով նախատեսվող բոլոր գրանցումները:

Դրանք են.

1) գիտական ղեկավար նշանակելու մասին տվյալները,

2) մագիստրոսական թեզի թեման հաստատելու մասին տվյալները,

3) մագիստրոսի կիսամյակային անհատական ուսումնական պլանների բովանդակության (դասընթացների ընտրության) և դրանց կատարման մասին տվյալները (ստուգարքների, քննությունների և դրանց վերահանձնումների գնահատականները, կուտակած կրեդիտները),

4) ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող կրթական մոդուլների (գիտահետազոտական աշխատանքի, պրակտիկաների, գիտական ղեկավարի սեմինարի) կատարման մասին տվյալները (ատեստավորման արդյունքները և կուտակած կրեդիտները),

5) թեզի թեմայի առաջարկի ներկայացման, քննարկման և հաստատման մասին տվյալները,

6) մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգի կատարման մասին տվյալները (գիտական ղեկավարի կարծիքն ու գնահատականը, մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի երաշխավորությունը, նշանակված ընդդիմախոսի կարծիքն ու գնահատականը, թեզի պաշտպանության գնահատականը):

4. Մագիստրոսի անհատական ակադեմիական տեղեկագիրը պահվում է ամբիոնում համապատասխան մագիստրոսական ծրագրի ղեկավարի մոտ, ով պատասխանատու է դրանում նախատեսված բոլոր գրանցումները ժամանակին և ճիշտ կատարելու համար: Տեղեկագրում համապատասխան գրանցումների հիմք են հանդիսանում ծրագրի բովանդակությամբ նախատեսվող բոլոր գործողությունների կատարումը հավաստող փաստաթղթերը: Մագիստրոսի պատրաստման ուսումնական պլաններում նախատեսվում է երկու հիմնական կրթամաս՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատաձևերը ներկայացված են մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման նորմատիվ ժամկետներին համապատասխանող կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական հատվածների ծավալների հետևյալ համամասնությամբ (ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում)՝

Կրթամասերի բաշխումն ըստ կրեդիտների

Աղյուսակ 1.

	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	3-րդ կիսամյակ	4-րդ կիսամյակ	Ընդամենը
Ուսումնական	27	24	15	6	72
Հետազոտական	3	6	15	24	48

Կրթամասերի բաշխումն ըստ կրեդիտների

Աղյուսակ 2

Կրթամաս	Կրեդիտներ
Ուսումնական	72
Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	6
Մասնագիտացված պատրաստման դասընթացներ	66
Տիպողոսային ծրագրի պարտադիր դասընթացներ	54
Տիպողոսային ծրագրի կամընտրական դասընթացներ	12
Հետազոտական	48
Գիտահետազոտական աշխատանք	24
Գիտահետազոտական պրակտիկա	6
Գիտամանկավարժական պրակտիկա	6
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12
Ընդամենը	120

6. Ծրագրի ուսումնական հատվածով նախատեսվող մոդուլների կատարման արդյունքները գրանցվում են սահմանված նմուշի տեղեկագրերում, գնահատականները գրանցվում են նաև մագիստրոսի ստուգման գրքույկում:

7. Ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող մոդուլների կատարման արդյունքները տեղեկագրում գրանցվում են սահմանված նմուշի հաշվետվությունների և մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգով նախատեսվող եզրակացությունների տվյալների հիման վրա: Դրանք ներկայացվում են ծրագրի ղեկավարին՝ մագիստրոսի անհատական ակադեմիական տեղեկագրում համապատասխան գրանցումը կատարելու և մագիստրոսի անձնական գործում պահելու համար:

Մագիստրոսի գիտական ղեկավարի նշանակումը և մագիստրոսական թեզի թեմայի հաստատումը

8. Մագիստրոսի գիտական ղեկավարի նշանակման ընթացակարգը ներառում է.

1) ծրագրի ղեկավարի հետ խորհրդակցությունների անցկացում, որոնց ընթացքում ճշգրտվում են մագիստրոսի հետազոտական հետաքրքրությունները, կազմակերպվում է հանդիպում տվյալ մագիստրոսական ծրագիրն իրականացնող համապատասխան մասնագետների հետ,

2) մագիստրոսների գիտական ղեկավարների համաձայնեցված թեկնածությունների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի հաստատմանը,

գիտական ղեկավարի նշանակում և համապատասխան գրանցման կատարում մագիստրոսի անհատական ակադեմիական տեղեկագրում:

9. Մագիստրոսական թեզի թեմայի հաստատման ընթացակարգը ներառում է.

1) գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում,

2) մագիստրոսական թեզերի թեմաների համաձայնեցված ձևակերպումների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) հաստատմանը և համապատասխան գրանցման կատարում մագիստրոսի անհատական ակադեմիական տեղեկագրում:

Մագիստրոսական ծրագրի ուսումնական հատվածի կազմակերպման ընթացակարգ

Ուսումնական ժամանակացույցը

10. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում հրապարակվում է (տպագիր ձևով կամ կայքում տեղադրելով, ինչպես նաև ծրագրում ընդգրկված մագիստրոսների էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով) տվյալ կիսամյակի ուսումնական օրացույցը (ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը), որտեղ ըստ օրերի նշվում են ուսուցման սկիզբը և ավարտը: Հրապարակվում է նաև պարապմունքների դասացուցակը՝ առաջադրվող բոլոր դասընթացների և դրանց քննությունների կայացման ժամանակացույցը, որը բովանդակում է մանրամասն տեղեկատվություն դասախոսի, դասընթացների անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ:

11. Ուսումնառության անհատական ծրագիրը մագիստրոսի անհատական ակադեմիական տեղեկագրի մաս է (հավելված 2):

12. Գիտական ղեկավարի երաշխավորությամբ մագիստրոսը կարող է հարակից ծրագրերի ընտրովի դասընթացների բաղադրիչով նախատեսվող դասընթացի փոխարեն գրանցվել տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացների բաղադրիչով նախատեսվող որևէ լրացուցիչ դասընթացի, եթե նախապես հրապարակված ժամանակացույցով դասընթացների կայացման զուգադիպում չի առաջանում:

13. Դասընթացների գրանցման համար սահմանված վերջնաժամկետից հետո երկու շաբաթվա ընթացքում գիտական ղեկավարի երաշխավորությամբ մագիստրոսը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության անհատական ծրագրում, որի մասին նրա անհատական ակադեմիական տեղեկագրում կատարվում է համապատասխան գրանցում:

14. Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար թվով մասնակիցներ չեն ընդգրկվել: Մագիստրոսի նախաձեռնությամբ դասընթացի փոփոխությունը սահմանված ժամկետից հետո թույլատրվում է միայն դասընթացը վարող դասախոսի համաձայնությամբ, սակայն ոչ ուշ, քան դասընթացն սկսելուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

Գիտելիքների գնահատման համակարգը մագիստրատուրայում

15. Մագիստրոսների գիտելիքների գնահատման համար կիրառվում է համալսարանում գործող 100 միավորանոց սանդղակը՝ համապատասխան ECTS համակարգում գործածվող տառային նիշերի: Դասընթացի գնահատման համար գործածվում է գնահատականի աստիճանական կուտակման սկզբունքը:

Տեսական դասընթացների համար

Աղյուսակ 3.

Գնահատվող աշխատաձևերը	Ընդհանուր գնահատականի կառուցվածքը
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Գիտելիքների ընթացիկ բանավոր կամ գրավոր ստուգում	50 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում	40 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 միավոր

Գործնական դասընթացների համար

Աղյուսակ 4.

Դասընթացի աշխատաձևերը	**Գնահատման կառուցվածքը**
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Ընթացիկ ստուգումներ	40 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում (ավարտական քննություն)	50 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 միավոր

Ծանոթություն. Պրակտիկաները, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքները ենթակա են գնահատման ստուգված/չստուգված ձևաչափով, որը չի ենթադրում գործնային հաշվարկ: Ստուգումը կատարվում է մագիստրոսի գիտական ղեկավարի կամ ամբիոնի վարիչի կողմից:

18. Քննությունը համարվում է հանձնված, եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը գերազանցում է 40 միավորը կամ գնահատման սանդղակի 40%-ը: Եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը պակաս է 40 միավորից, ապա թույլատրվում է դասընթացի վերահանձնում: Դրական գնահատված դասընթացի վերահանձնում չի թույլատրվում:

19. Մագիստրոսը հեռացվում է համալսարանից՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

Մագիստրոսական ծրագրի հետազոտական հատվածի կազմակերպման ընթացակարգ

Հետազոտական մոդուլների ժամանակացույցը

20. Յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում ծրագրի ղեկավարը կազմում և մագիստրոսներին է ներկայացնում տվյալ կիսամյակի հետազոտական օրացույցը (ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող կրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը): Այն, ըստ կիսամյակների բովանդակության, ներառում է

Ամփոփիչ ատեստավորման կարգը.

21. Ծրագրի հետազոտական հատվածով նախատեսված կրթական մոդուլների հաշվետվության համար կիրառվում է ստուգված/չստուգված նշումով ատեստավորման եղանակ՝ համաձայն նախապես սահմանված ժամանակացույցի: Պրակտիկաների, ինչպես նաև ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների ատեստավորումը կատարում է մագիստրոսի գիտական ղեկավարը կամ համապատասխան ամբիոնի վարիչը:

22. Ատեստավորման թերթիկը հանձնվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարին: Ուսումնառության առաջին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած մագիստրոսներին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը երկրորդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսվող աշխատանքը:

Ծրագրի ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը

23. Ծրագրի ամփոփիչ ատեստավորման կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

24. թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի քննարկմանը: Թեզի հետ միասին ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է մագիստրոսի աշխատանքի հիմնավորված գնահատական,

1/ մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից ընդդիմախոսի, արտաքին գրախոսողի նշանակում,

2/ մագիստրոսական թեզի նախնական քննարկում մագիստրոսական ծրագրի ղեկավարի, մագիստրոսի գիտական ղեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի կողմից՝ մագիստրոսի մասնակցությամբ:

3/ Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում վերամշակել թեզը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում թեզը մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից երաշխավորում է պաշտպանության: Եզրակացության մեջ նշվում է թեզի հիմնավորված գնահատականը:

4/ մագիստրոսական թեզի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

Մագիստրոսական թեզի գնահատման կարգը

25. Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատումը կատարվում է /տե՛ս առաջին մասի Աղյուսակ 9-ը/ ներկայացված 100 միավորանոց սանդղակով՝ գնահատականը գոյանում է գիտական ղեկավարի կարծիքի, պաշտոնական ընդդիմախոսի և պաշտպանության ընթացքում թեզի ներկայացման և դրա շուրջ արված հարցադրումներին տրված պատասխանների հիման վրա:

Ծրագրի ավարտական պահանջները

26. Որակավորում ստանալու համար մագիստրոսը պետք է ծրագրի կատարման ընթացքում լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որից 72 կրեդիտ՝ ուսումնական հատվածից (այդ թվում՝ 60 կրեդիտ պարտադիր դասընթացներից, իսկ 12 կրեդիտ՝ կամընտրական դասընթացներից) և 48 կրեդիտ՝ հետազոտական հատվածից:

27. Մինչև ամփոփիչ ատեստավորումը (մագիստրոսական թեզի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը մագիստրոսի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար մագիստրոսը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:

28. Մագիստրոսներին համապատասխան որակավորմամբ դիպլոմները (սովորական, գերազանցության) տրվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի: